

MasterCard UEFA Champions League Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	6, 000 ՀՀ դրամ տարեկան
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերաժախտի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք	Առանց գրավային ապահովվածության - ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 21%-24% ² - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 17%-20% - Եվրո արժույթով քարտեր՝ 16%-19% Գրավային ապահովվածությամբ՝ - ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 18%-22% ² - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 15%-18% - Եվրո արժույթով քարտեր՝ 14%-17%
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գծաբաժնի համար)	գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 7-րդ օրացուցային օրը
5. Ամսական պարտադիր մարումներ	10%
6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	American Express Cashback՝ 300 ՀՀ դրամ ամսական
7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	2,000 ՀՀ դրամ
8. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
9. Քարտի գործողության ժամկետ	3 տարի
10. Կանխիկ դրամի տրամադրում բանկումատներում և կանխիկ տրամադրման կետերում՝	
• <i>ԱԿԲԼ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկ</i>	1%
• «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկեր	1%
• Այլ բանկեր Հայաստանում	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
• Այլ բանկեր արտերկրում	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
11. Բանկի քարտային հաշիվներին կանխիկ դրամի մուտքագրում բանկումատների միջոցով	
• <i>Բանկի բանկումատներ</i>	0%
• «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկումատներ	1%
12. Անկանխիկ վճարում քարտով	անվճար
13. Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> ▪ 500,000 ՀՀ դրամ ▪ 1,000 ԱՄՆ դոլար ▪ 1,000 Եվրո
14. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
15. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> ▪ 1,000,000 ՀՀ դրամ ▪ 2,000 ԱՄՆ դոլար ▪ 2,000 Եվրո
16. http://www.arca.am կայքի և բանկումատների միջոցով քարտից-քարտ փոխանցումներ Բանկի քարտերին	0.3%
17. http://www.arca.am կայքի և բանկումատների միջոցով քարտից-քարտ փոխանցումներ «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի քարտերին	0.5%
18. SMS-տեղեկացում ծառայություն	15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)
19. Քարտի փոխարինում Քարտի կրոստի, վնասման կամ PIN-կոդի կրոստի դեպքում (Հայաստանում)	1,500 ՀՀ դրամ
20. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը դրամային ArCa Կենսաթոշակային քարտի համար կազմում է 3.08%, ըլուր այլ քարտերի համար՝ 0%:

Բանկի կողմից Քարտերի տրամադրման և սպասարկման համար սահմանված սակագների կիրառման հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը կարող է նվազել:

ԱԿԲԼ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻՄ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից»՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 10 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտաժողովային ավանդի դեպքում - 5 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (5 միլիոնից ավել), և՛ արտաժողովային ավանդների դեպքում - միայն դրամային ավանդը՝ մինչև 10 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (5 միլիոնից պակաս), և՛ արտաժողովային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտաժողովային ավանդը՝ 5 մլն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կորվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվի անսակակ կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն սահմանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապանի բանավոր համեմարաբարությանը:

Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործման մասը քարտային հաշվի մուտք անելու դեպքում քարտապանը տոկոսագումարներ չի վճարում:
- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը վճարվելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերաժախտը և գերաժախտի նկատմամբ հաշվարկված տոկոսները:

¹ Վարկային գծի չունեցող քարտերի գերաժախտի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով
² Անվճար ենթե տարի տվյալ վճարային քարտով վարկային գծի ունեցող հաճախորդների համար քարտի վերաթողարկումից հետո առանց գրավային ապահովվածության՝ 19-21%, գրավային ապահովվածությամբ՝ 18%-22%

- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկոմատի կողմից: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար՝ բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման վարձը գանձվում է ամսական սկզբունքով:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանափակի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում:

MasterCard UEFA Champions League ՔԱՐՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հիմնական հասկացություններ

«Բանկ» - «ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ,

«Քարտ(եր)» - «ԱԿԲԱ-ԿՐԵՂԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկվող MasterCard UEFA Champions League տեսակի գործողության մեջ գտնվող քարտ(եր),

«Քարտապան» - ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ, ում անունով Բանկը բացել է Քարտային հաշիվ,

«Քարտային հաշիվ» Բանկային հաշիվ, որից հնարավոր է օգտվել Քարտի միջոցով,

«Վճարային Գործառնություն» - Քարտով կատարված անկանխիկ գործառնություն,

«Պարզևատրում» - Քարտով կատարված վճարային գործառնությունների գումարի դիմաց սույն պայմաններով սահմանված կարգով Քարտապանին տրամադրվող UEFA Champions League լոգոտիպը կրող ապրանքատեսակ, որը ներկայացված է www.uefa.com կայքի օնլայն խանութում,

«Խաղարկություն» - Բանկի կողմից նախապես սահմանված պայմաններով Քարտապանների համար պարբերաբար իրականացվող խաղարկություն, որտեղ կարող են խաղարկվել միջազգային ֆուտբոլային հանդիպումների և միջոցառումների տոմսեր, ինչպես նաև ուղևորության ճանապարհորդական փաթեթներ:

2. Նկարագրություն

«Պարզևատրումների ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսում է երաշխավորված պարզևատրումների տրամադրում և խաղարկությունների իրականացում:

3. Ընդհանուր դրույթներ

3.1. Քարտի ձեռքբերումը ենթադրում է լիարժեք համաձայնություն Քարտի հետ համատեղ իրականացվող Ծրագրի իրականացման պայմաններին:

3.2. Ծրագիրը չի գործում գործողության ժամկետը լրացած, ինչպես նաև տվյալ պահին Բանկի կողմից բլոկավորված քարտերի համար:

3.3. Ժամկետանց պարտավորություն և/կամ Քարտի սպասարկման միջնորդավճարի պարտավորություն ունենալու դեպքում Ծրագիրը հասանելի չէ քարտապանի համար՝ մինչ վերջինիս կողմից պարտավորությունների մարումը:

3.4. Ծրագիրը հասանելի է քարտապանի համար քարտի գործողության ողջ ժամկետի ընթացքում: Քարտի գործողության ժամկետի ավարտի պահից առավելագույնը 3 (երեք) ամսվա ընթացքում Քարտը վերաթողարկելու դեպքում նախկինում կատարված այն գործառնությունները, որոնց համար դեռևս պարզևատրման պատվեր չի կատարվել, պահպանվում են և փոխանցվում վերաթողարկված քարտի վրա:

3.5. Բանկն իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել կամ ձևափոխել Ծրագիրը, ինչպես նաև փոփոխել Ծրագրով նախատեսված պարզևատրումների տեսականին:

3.6. Գործառնությունը Ծրագրում հաշվարկվում է Բանկի կողմից գործառնության ստացումից և Քարտապանի Քարտային հաշվին ձևակերպելուց հետո:

3.7. Դրամային արժույթով քարտերով արտարժութային վճարային գործառնություն կատարելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարային գործառնության հաշվարկման հիմք է հանդիսանում քարտային հաշվից գանձված վճարային գործառնության գումարը՝ արտահայտված ՀՀ դրամով:

3.8. Դոլարային կամ եվրո արժույթով քարտերով արտարժութային վճարային գործառնություն կատարելու դեպքում Ծրագրի շրջանակներում վճարային գործառնության հաշվարկման հիմք է հանդիսանում քարտային հաշվից գանձված վճարային գործառնության գումարը՝ վերածված ՀՀ դրամի տվյալ օրվա դրությամբ Բանկի կողմից իրականացվող արտարժութային փոխարժեքով:

3.9. Ծրագրին մասնակցությունը չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճարներ կամ միջնորդավճարներ:

3.10. Ստորև նշված գործառնությունները չեն հաշվարկվում Ծրագրի շրջանակներում.

ա) կանխիկացումներ

բ) կոմունալ վճարումներ

գ) քարտից քարտ, ինչպես նաև դեպի այլ հաշիվներ փոխանցումներ

դ) էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումներ (PayPal, Skrill, Web Money, Yandex Money և այլն)

ե) բուքմենթերական գրասենյակներում, խաղատներում և տվյալ ոլորտի այլ սպասարկման կետերում կատարված վճարումներ՝ ներառյալ օնլայն վճարումները

eFO 72-04-25/2#5

4. Գործառնությունների կատարում և պարգևատրումների ստացում

4.1. Քարտապանի կողմից կատարված յուրաքանչյուր վճարային գործառնություն (բացառությամբ 3.10 կետով սահմանված գործառնությունների) հաշվարկվում է Պարգևատրման համար անհրաժեշտ գործառնությունների ծավալը հաշվարկելիս:

4.2 Պարգևատրումները գնանշված են www.uefa.com կայքի օնլայն խանութում:

4.3 Քարտապանի պարգևատրման գումարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

4.3.1. Դոլարային արժույթով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի օնլայն խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի ԱՄՆ դոլարը:

4.3.2 Եվրո արժույթով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի օնլայն խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի եվրոն:

4.3.3 ՀՀ դրամով քարտերի համար՝ Քարտապանի կողմից կատարված վճարային գործառնությունների հանրագումարի 1%-ի չափով, ընդ որում այս դեպքում Քարտապանը www.uefa.com կայքի օնլայն խանութում որպես գնանշման արժույթ պետք է ընտրի ԱՄՆ դոլարը, իսկ կատարված վճարային գործառնությունների գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ 1(մեկ) ԱՄՆ դոլարի դիմաց 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ փոխարժեքով:

4.4 Քարտապանի կողմից մինչև 2013 թվականի մայիսի 2-ը կատարված կանխիկացման գործառնությունները սույն պայմանների 4.3 կետում սահմանված կարգով ևս ընդգրկվում են պարգևատրման գումարի հաշվարկում:

4.5 Այն գործառնությունների գումարը, որոնց դիմաց Քարտապանը ստացել է պարգևատրում, չեն ընդգրկվում պարգևատրման գումարի հաշվարկում:

4.6 Պարգևատրումը պատվիրելու համար Քարտապանը պետք է զանգահարի Բանկ (010) 31 88 99 հեռախոսահամարով և հայտնի իր կողմից ընտրված պարգևատրման տվյալները:

4.7 Քարտապանի կողմից ընտրված ապրանքատեսակի գնման, բեռնափոխադրման և մաքսագերծման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Բանկը:

4.8 Քարտապանների կողմից հավաքագրված պատվերները Բանկի կողմից իրականացվում են տվյալ ամսվա վերջին և հանձնվում վերջիններիս պատվիրման օրվանից առավելագույնը 2 ամսվա ընթացքում: Ընդ որում, Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում քարտապանի կողմից ընտրված պարգևատրման՝ պատվերի կատարման պահին հասանելիության կամ բավարարության համար: Պատվերի կատարման պահին վերջիններիս անհասանելի կամ անբավարար լինելու դեպքում Բանկը Քարտապանին առաջարկում է այլ ընտրություն կատարել:

5. Մասնակցություն խաղարկություններին

5.1. Քարտապանի կողմից կատարված յուրաքանչյուր գործառնություն հաշվարկվում է նրա օգտին խաղարկությանը մասնակցելու համար:

5.2. Խաղարկության անցկացման վայրի, ժամանակի, մասնակցության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների և այլ մանրամասների համար տեղեկությունները խաղարկության անցկացումից առնվազն 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ հրապարակվում են Բանկի կայքէջում, ինչպես նաև այլ գովազդային աղբյուրների միջոցով:

5.3. Խաղարկության արդյունքում հաղթող ճանաչված և հատուկ մրցանակների արժանացած Քարտապանները խաղարկության ավարտից առավելագույնը 10 (տասը) օրացուցային օրվա ընթացքում Բանկի կողմից հեռախոսազանգի և/կամ էլեկտրոնային նամակի միջոցով կտեղեկացվեն իրենց շահումների վերաբերյալ:

5.4. Խաղարկության արդյունքում որոշված հաղթող Քարտապանների շահումները վերջնական են և ենթակա չեն ձևափոխման կամ վերախաղարկման:

5.5. Խաղարկված մրցանակները ենթակա չեն գումարային փոխակերպման՝ ոչ ամբողջական և ոչ էլ մասնակի:

5.6. Մրցանակների տրամադրման համար ոչ Բանկի մեղքով առաջացած խոչընդոտների դեպքում Բանկն իրավունք ունի փոխարինել պարգևատրումը համարժեք կամ ավելի բարձր արժեք ունեցող այլ պարգևատրումներով:

5.7. Բանկը պատասխանատվություն չի կրում տրամադրված մրցանակի ամբողջական կամ մասնակի կորստի կամ վնասումների համար:

6. Պայմանների ուժի մեջ մտնելը

6.1. Սույն պայմաններն ուժի մեջ են մտնում 2013 թվականի մայիսի 2-ից:

6.2. Սույն պայմաններն ուժի մեջ մտնելով, ուժը կորցրած է ճանաչվում eFO 72-04-25 պայմանների նախորդ խմբագրությունը:

eFO 72-04-25/2#5